րութիւնը» ամենացաւալի կերպով արտայայտում է հայկական հասարակական որոշ ոյժերի խակութիւնն և կատարեալ սնանկութիւնը։ Նոր ճանապարհ, նոր դաստիարակութիւն մեզ!

ԲՐԴԱԿԱՆ ԱՌԱԾ

—

Ճըվիք է վիթ-վիթանի,
Տա մալա խո խրրապ կըր,
Եէ՝ մրն ժի լը սարդանի։

—

Մի հատ ճընճղուկ ձմեռուայ կիսուն,
Իր բոյն էր շինել մի խրոիւի տակ,
Ածել էր այնտեղ իր քանի հատ ձուն,
Որ այդ ձուերից հանէր իրան ձագ։

Գնաց քրդի մէկ, տեսաւ ճնճղուն.
Տեսաւ որ բնում ձուեր է ածել.
Ասեց. «այնպէս է՝ մօտիկ է գարուն
Որ ճնճուղ արդէն Թուխսի է նստել»։

Քիւրդն ասաց—երթամ ոչխարս բերեմ սար,
Որ գայ բարձրանայ դէպ կանանչ լեռներ
Թարմ ու լաւ խոտեր արածի ոչխար,
Ճնճուղ Թուխսի է, անցել է ձմեռ։

Գնաց ու իսկոյն բերեց ոչխարներ,
Օ՛, հօ՜ անելով դէպի լեռ քաշեց։
Սաստկացաւ ձմեռ, սկսեց քքեր,
Բոլոր ոչխարներ մէկ գիշեր ջնջեց։

Քիւրդ ասաց. «գնամ, տեսնեմ ճնճուղին,
Մեռած է արդեօք Թէ ողջ է ապրում
Գնաց, ճնճուղ սատկել է մէջ բնին,
Այստեղ վշտացած այսպէս է խօսում։

«Ճըլվլող ճնճուղ, ճլվլող ճնճուղ, քու տուն աւերեցիր,
Իմ տունն էլ քո տան վրայ տուեցիր»։

Դա. Միրաքեան